# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք, ՀՀ,
Արմավիրի մարզ, գ. Ջրարբի ,

N 22
*07 ապրիլ 2015թ.*

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՇՈՏ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ է ներկայացվում ՀՀ Արմավիրի մարզի Ջրարբիի գյուղական համայնքի ղեկավարի կողմից 2015 թվականի մարտ ամսվա ընթացքում ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները:

Առդիր 6 թերթ:

Համայնքի ղեկավար՝ Ղազար Ղազարյան

*Կատ. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. Արեյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի, ,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մարտի 2015թվականի N 01-Ա

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅՀԻՆ ՀԱՆՁՆԱՇՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման կարգը հաստատելու մասին» N1582-Ն որոշման 3-րդ կետը և ղեկավարվելով նույն որոշմամբ հաստաված կարգի դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի N 1582-Ն որոշման 3-րդ կետի, Ջրարբիի գյուղապետարանում ստեղծել «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման համայնքային հանձնաժողով»:

2.Հաստատել հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելված 1-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

20 15թվակիանի մարտի 13
գ.Ջրարբի

Հավելված
Ջրաբբիի գյուղական համայնքի
ղեկավարի 2015 թվականի
մարտի 13-ի N 01 որոշման

ԿԱԶՄ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | |
| Ղազար Ղազարյան | համայնքի ղեկավար |
| Անդամներ | |
| Արսեն Բաբայան | համայնքի ղեկավարի տեղակալ |
| Անուշ Արեյան | աշխատակազմի քարտուղար |
| Արման Գրիգորյան | ավագանու անդամ |
| Մանվել Փալանդուզյան | ավագանու անդամ |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի, ,

## Ո Ր Ո Շ Ու Մ

24 մարտի 2015թվականի N 02-Ա

## ԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄԵԿ ՇԱԲԱԹՈՎ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի առաջին մասով և հիմք ընդունելով Ջրառատի բժշկական ամբուլատորիայի տնօրենի զեկուցագիրը և հաշվի առնելով մանկապարտեզ հաճախող երեխաների շրջանում գրիպով հիվանդանալու բարձր ցուցանիշը .

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբիի գյուղական համայնքի <<Ջրարբի համայնքի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատանքները 2015 թվականի մարտի 24-ից մինչև մարտի 31 դադարեցնել:

2. Կազմակերպության նյութական պատասխանատվությունը թողնել մանկապարտեզի տնօրենի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

2015 թվականի մարտի 24
գ.Ջրարբի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի, ,

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

06 մարտի 2015թվականի N 01

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով, <<Ջրարբի համայնքի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ում սննդամթերքի գույքագրման և սանիտարական վիճակի ստուգման նպատակով

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել հանձնաժողով համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել մանկապարտեզի տնօրենին և տնտեսվարին:

3. Հանձնաժողովի նախագահին (Ա.Արեյան) սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն ավարտել մեկ աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքների մասին զեկուցել համայնքի ղեկավարին:

4.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

2015 թ. մարտի 6
գ.Ջրարբի

Հավելված
Ջրարբիի գյուղական համայնքի
ղեկավարի 2015 թվականի
մարտի 6-ի N 01 կարգադրության

# ԿԱԶՄ

## ԳՈՒՅՔԱԳՐԱՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ

Անուշ Արեյան — Աշխատակազմի քարտուղար

Անդամներ

Աննա Մաղաքյան — Գլխավոր մասնագետ

Նարինե Դավթյան — 1-ին կարգի մասնագետ

Մասնակիցներ

Իրինա Ենգիբարյան — Մանկապարտեզի տնօրեն

Արմինե Ավագյան — Մանկապարտեզի տնտեսվար